Իշխանությունն էլ տալ չեմ, Ղարաբաղն էլ

Երեկ Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը ծավալուն եւ զգացմունքային ելույթ է ունեցել, իսկ վերջում ասել է. «Անհնար կլիներ ամփոփել այս ելույթը՝ առանց արագ անդրադարձ կատարելու երեք առանցքային հարցերի: Առաջինը Հայաստանի ներքաղաքական իրավիճակն է: Ես կուզեի, որ դուք ճիշտ ըմբռնեք եւ գնահատեք այն: Մի քաղաքական ուժ, որ ընտրություններից ամիսներ առաջ բացահայտ հայտարարում էր, որ չի ընդունելու ընտրությունների որեւէ արդյունք, բացի իր իսկ հաղթանակից, փորձում է քաղաքական շանտաժի միջոցով ապակայունացնել վիճակը երկրում: Բազմիցս հայտարարել եմ, եւ դրան են ուղղված եղել նախագահի պաշտոնը ստանձնելուց ի վեր իմ բոլոր քայլերը, որ պատրաստ եմ, Հայաստանի շահից ելնելով՝ բանակցել եւ աշխատել ցանկացած քաղաքական ուժի հետ: Լուրջ քայլեր են ձեռնարկվել հետընտրական լարումը թուլացնելու ուղղությամբ՝ ընդդիմությունը հսկայական ծավալով եթեր է հրավիրվում բոլոր հեռուստաալիքների կողմից, ազատ են արձակվել մարտի 1-ի դեպքերի առնչությամբ կալանավորված բոլոր այն մարդիկ, ովքեր անմիջականորեն չեն մասնակցել բռնություններին կամ ում մեղքի ամբողջական ապացույցները բացակայում են»: Չի բացառվում, որ այս խոսքերն ասելիս Սերժ Սարգսյանն ինքն իրեն լուրջ է ընդունել, բայց Ռուսաստանի հայերի հիմնական մասը խոպանչիներ են, որոնք սեզոնից հետո վերադառնում են հայրենիք, ներսից տեսնում իրական պատկերը, իսկ մնացածը Հայաստանի հետ բարեկամական կապեր ունեն, հեռախոսով ու անկախ լրատվամիջոցներով կարող են մեր երկրում տիրող վիճակի մասին ճիշտ պատկերացում կազմել: ՀՀ նորընտիր նախագահը, այնուամենայնիվ, Մոսկվայում ասել է, թե Հայաստանի արմատական ընդդիմադիրների հետ իր հաշտեցման քայլերը շարունակվելու են. «Սակայն հաջողությամբ ավարտվելու համար դրանք պետք է լինեն երկկողմ: Եւ որեւէ մեկին տրված չի կարող լինել ընտրված իշխանությունը տապալելու կոչերով, սպառնալիքներով եւ ահաբեկումներով խաթարել մեր պետականության կայունությունը»,- դրսում սրտնեղել է Սերժ Սարգսյանը:

Ռուսաստանի հայերին հետաքրքրող հաջորդ կարեւոր հարցը, ըստ Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդիրն է: «Դուք գիտեք, որ վերջերս կայացել են իմ բանակցությունները Ադրբեջանի նախագահի հետ: Մենք համաձայնեցինք շարունակել բանակցային գործընթացը հիմնական սկզբունքներն ամրագրող փաստաթղթի նախագծի շրջանակներում: Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի կազմում: Այն փոխանցվել է Խորհրդային Ադրբեջանին կուսակցական մարմնի ապօրինի որոշմամբ: Որոշման անթաքույց հիմնավորումն այն էր, որ դա կօգնի տարածել հոկտեմբերյան հեղափոխության եւ համայնավարության գաղափարները դեպի մահմեդական Արեւելք: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը օրենքի շրջանակներում, իսկ հետո եւ՝ պարտադրված գոյամարտում վաստակել է անկախ պետականության իր իրավունքը, եւ խնդիրը չի կարող ունենալ այդ կարգավիճակը նվազեցնող որեւէ լուծում»,- մոսկովյան ելույթը բոցաշունչ հայրենասիրությամբ ամփոփել է Ռուսաստանի ֆորպոստի տնօրենը: